եթէ զիւրեանցսն նախապատիւ համարելով ժխտեսցեն, և 'ի Ս. Տունն չխնայեսցեն, պատժեսցին և յանարգս դասեսցին, և զայնպիսիսն անպատճառ առանց ակնառութեան միաբան կնքով նշանագրեսցեն Խորհրդականքն, և ցուցցեն մեզ զի գիտասցուք և մեք, և ըստ արժանոյն վարձատուր լիցուք։ Սոյն կարգ եղիցի և ամենայն Ռէյիզաց վանօրէից ներքնոց և արտաքնոց։

9°. Նուիրակութեան մեծ կոնդակն՝ Ս. Աթոռոյն եւ Պատրիարքի կնքովն լիցի (ըստ նախնեաց), բայց յիշեսցի 'ի կոնդակին թէ (խորհրդով և միակամ ընտրութեամբ Սրբոյ Աթոռոյս եօթն Խորհրդական անուանեալ եղբարց՝ առաքեցաւ այս անուն Նուիրակն), եւ բաց յայնմանէ նոքին իսկ Խորհրդականքն տացեն 'ի ձեռս Նուիրակաց կնքով եւ ստորագրութեամբ իւրեանց գիր ինն. յանուն Առաջնորդաց իւրաքանչիւր վիճակաց և Քահանայից և Իշխանաց յատկապէս յիշելով համառօտ զնեղութիւն Ս. Տանն, և յորդորելով 'ի հոգատարութիւն Նուիրակին և յարդիւնաւորութիւն տրոց և այլն և այլն։ Նոյնպէս և Պատրիարքն ուրոյն ուրոյն գրով և կնքով իւրով գրեսցէ յանձնարարութիւն և 'ի սէր թէ 'ի մեծն Պոլիս, եւ թէ յայլ ամենայն տեղիս։

10°. Յանուն Ս. Աթոռոյն իւզադին և մոմագին, եկաւ հասաւ, օրհնութիւն կոնդակաց անուանեալ զողորմութիւնսն ուխտաւորք մատուսցեն Սրբազան Պատրիարքին, և նա յանուանէ արձանագրեսցէ 'ի տումար և 'ի ժամանակին ըստ տումարին յանձնեսցէ Խորհրդականաց 'ի հաշիւ Ս. Աթոռոյն։ Իսկ յանուն Ս. Յարութեան տաճարին, Գերեզմանին Քրիստոսի եկեալքն և եղեալքն՝ նորին Ռէյիզին տացեն, և նա օրհնութեան գիր տացէ ըստ սովորութեան. և յետ Ս. Զատկին ընդ այլ արդեանց տացէ զհաշիւն Խորհրդականաց։ Նոյնպէս և յանուն ժամարարաց եկեալ եւ եղեալ քառասնից և յիշէք և ժամուց պատարագի ողորմութիւնքն տացեն Աւագ Լուսարարին, որ և ըստ սովորութեան 'ի տումար առեալ տացէ գիր օրհնութեան և զկնի Ս. Զատկին բաժանեսցէ ժամարար վարդապետաց և սարկաւագաց առանց զրկողութեան արժանաւոր մշակաց գիտութեամբ Խորհրդականաց։